

## Կարինե ԲԱԶԵՅԱՆ

# ԱՍԵԿՈՍԵՆԵՐԻ ՈՒ ԲԱՄԲԱՍԱՆՁԻ ԿԵՆՅԱՂԱՎԱՐՈՒՄԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Գյումրեցի նկարիչ Գևորգ Բրուտյանն ունի կենցաղային տեսարաններ պարունակող գրքանկարների «Հին Գյումրի» կոչվող շարք (1937թ): Ծաղրանկարներ համարվող, սակայն իրենց բնույթով ավելի շուտ շարժ հիշեցնող նկարներում ենդինակը ծաղրի է ենթարկում քաղաքի ոչ վաղ անցյալի «հետամնաց» մի շարք ապրույթներ: Կենցաղային ժանրի տեսարանների (ամուսնական, հուղարկավորման արարողություններ, քաղնիքի ծես և այլն) մեջ մեր ուշաբռությունը գրավեց բանրասանիք թեմայով զծանկարը: Հայրենի քաղաքի կենցաղին ու բարերին քաջածանոք նկարիչը արվեստագետին հասուկ խորաքափանցությամբ և վարպետությամբ կարողացել է քամբասող կանանց ձեռքերի, աջերի ու թերամի շարժումների միջոցով տալ բնակչության մեջ լայնորեն տարածված այդ սովորույթի ամբողջ պատկերը: Այս աշխատանքը մեզ հետաքրքրեց նրանով, որ այդ բացասական երևույթը կենցաղային քննարկման մակարդակից սովորաբար դուրս չի եկել՝ բացառությամբ դրա գեղարվեստական նկարագրությունները, որոնցից առավել ուշագրավ է Ավ. Խահակյանի «Ուստա Կարոյի այցը սանանայրերին» պատմվածքը:<sup>2</sup> Այս զծանկարը չէր դառնա առանձին վերլուծության



առարկա, եթե ձեռքի տակ չունենայինք լենինականյան բամբասերի մի քանի նաուշներ, որոնք, որպես բանահյուսության ուրույն ժանր կարևորել և հավաքել է Հրաչյա Ակոսյանը 1977-1980 թվականներին։<sup>3</sup>

Հատկանշական է, որ բամբասանքին անդրադարձել են հատկապես զյումբեցիները՝ այն համարելով իրենց քաղաքին բնորոշ խիստ բացասական երևոյթ, միաժամանակ քննադատաբար վերաբերվելով իրենց կողմից անընդունելի այդ սո-

**Վիրույթին:** Անշուշտ, բամբասանքը զուտ գյումրեցիներին հատուկ հատկանիշ չէ, սակայն, թերևս խորը էլ չէ, եթե գրավել է նկարչի և բանահավաքի ուշադրությունը։ Մենք ևս փորձեցինք հարցում անցկացնել գյումրեցիների մեջ երկու նպատակով. նախ՝ լրացնելու ժեղքի տակ եղած նյութերը, և երկրորդ՝ պարզելու արդի հասարակության կարծիքն ու վերաբերմունքը դրա նկատմամբ։ Հարցումը, որին նաևնակցել են երիտասարդ և միջին տարիքի երկու սեռի ներկայացուցիչներ ցոյց տվեց, որ բամբասանքի ու ասելկոսեի նախան տարրեր կարծիքներ կան հասարակության մեջ։ Մի մասի կարծիքով բամբասանքը սովոր վրա է հիմնված, իսկ մյուսը գտնում է, որ այն իրական իմք ունեցող չարախոսություն է։ Ինչ վերաբերում է ասելկոսեներին, ապա այստեղ ևս տարակարծություններ կան՝ պայմանավորված նախորդ հարցի պատասխանով, քանի որ սովորաբար ասելկոսեն դիտարկվում է որպես բամբասանքին հակառակ երևոյթ։ Այսպես՝ «Ասելկոսեն տեղեկությունը փոխանցում է, իսկ բամբասանքը՝ չափազանցնում», «Ասելկոսեները անհիմն խոսակցություններ են, իսկ բամբասանքը զբաղմունք է», «Բամբա-

<sup>1</sup> L. Արան և յան, Գյումրիի նկարիչներ. Գևորգ Բրուսյան, ԾՊՄԾ յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 240-241:

<sup>2</sup> Ավ. Իւահակյան, Երկերի ժողովածու, հ.4, Եր., 1975, էջ 249-279:

<sup>3</sup>ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության իմաստության բանախցության բաժնի արխիվ, Հր. Սկրույլանի հավաքածու, FFVI: 4094-4833, FFXI: 0001-2048, FFXI: 7253-7830 (հետայսու՝ Հր. Սկրույլանի նույներ):

սանքը կարող է վաստ հետևանքներ ունենալ, իսկ ասեկուեները՝<sup>4</sup> «չ», և միայն քչերն են դրանք համարում նույն երևույթը:

Իրականում բամբասանքն ու ասեկուեն հունանիշներ են: Ըստ Աճառյանի՝ «քամբաս բառը կազմված է բամ (ասում են) և բաս (ասում են) բայաձևերից, որը բարբառներում հանդիպում է ասեկուեն, կասէ-կուսէ, ասուաս, ըսի-ըսավ և այլ ձևերով»:<sup>5</sup> Բամբասանքը բացատրվում է որպես «Մեղադրութիւն, պարսաւ, չարախոտութիւն, տրտունջ, լուտանք, թշնամանք»,<sup>6</sup> «Անբարյացակամ կամ վարկարեկիշ տեղեկություն որևէ մեկի մասին, որ տարածվում է անստույգ, ոչ ծիշտ և մտացածին լուրերի վրա»:<sup>7</sup>

Քիսասոններությունը բամբասանքը համարում է մարդկությանը բնորոշ մոլորություններից մեկը, որը, հակառակվելով ուղիղ բանականությանն ու աստվածային օրենքին, ապականում է մարդուն բարոյապես և ֆիզիկապես, քանի որ արագացնում է մահը: Հայ Եկեղեցին գտնում է, որ «Սի բամբասանքից սովորաբար երեք չարիք է ծնվում. առաջին՝ բամբասողը մահու չափ մեղանչում է, երկրորդ՝ լսողը մեղսակից է դառնում, երրորդ՝ բամբասվածն էլ է նոյն մեղքով մեղանչում կամ ուրիշ մեղքեր ևս գործում»:<sup>8</sup>

Բամբասանքը դիտվում է նաև որպես ժողովրդական զրուցարանության որոշակի ժամը, որը կարող է հիմնվել կոնկրետ դիպվածի վրա, ունենալ որոշակի սյուժեն և դրանից ածանցված սյուժետային գծեր, որոնք տիպորշվում ու զարգանում են տարաբնույթ մոտիվներով ու կայուն բանաձևային հարակցումներով: Դանք կարող են լինել նաև չպատճառաբանված հերոյուրանքներ, զրպարտություններ կամ անհինն հայտարարություններ: Ընդգծելով հասարակական կյանքի ու կենցաղի սովորու կողմերն ու երևույթները, բամբասանքները պատկերավոր արտահայտությունների ու կայուն բանաձևների մի համաձառվածք են:<sup>9</sup> Բամբասանքներում տեղ են գտել.

- *Առած-ասացվածքներ-«Կընօս խորատեն չի պակսի», «Չուրը մտնին լողալ գիտեն, քյասարն հելմին լրտալ գիտեն», «Մեր հացի մեջ աղ չկա» և այլն:*
- *Դարձվածքներ-«Մե կովեն, տասը ծովեն», «Օրը մեզ է, ծեծը հազար», «Քիչ այիր ունեյիք, քոքեց էլ հանեցիք», «Բոլորն էլ մե սանդրոի կտավ են» և այլն:*
- *Օրինամեր-«Օդորմի իիրան, լուսը կարի գերեզմանին», «Ասված քեզի զյանք տա», «Օդորմի քու անցավորներին» և այլն:*
- *Անեծքներ-«Սարքի լուսն քոռներ», «Գեղինը մտնիս», «Այ վայր էրգիդ զլխուն», «Չուրունդ բրիի», «Քակեղ քաղեն», «Էրբըներդ էղնի, գալերդ չշնին» և այլն:*
- *Լուսամեր-«Քերմշներ», «Որգի», «Քյաֆքառ», «Հումժներ», «Այլանտագ», «Ամյուն», «Հիշո» և այլն:*

Բամբասանքներում վաս գոյմերով ներկայացված է նաև զյումբեցուն և շինակցուն հատուկ զվարճախոտությունն ու սրամտությունը, որը, հատկապես լավ է երևում համեմատություններում, ինչպես օրինակ՝ «Քըդի երտամ թաղային լիազորի հանգըթեն թըղորով բռնեն, օր ծեռները չըկեղըրոյի», «Պեսոկը էնքան քիչ է լցըրե, օր ֆիշեն գունը քոցրել է», «Էշը հինքն է, խողը հուրիշի հառաջը կդնեն», «Օտը զիդես քեզ ըշըմ մաքրված. մէ այլանդազը հարձակուրդ զնաց», «սատանի զիզիզ»/նկատի ունի դրան զանզը Կ. Բ./, «Բոյին կիշկիմ, սոլերուն...սոլերն ուրանե բոյով ին»:<sup>10</sup>

Այն բանում, թե որքան տարածված երևույթ է բամբասանքը, կարելի է դատել բամբասանք բառից ածանցված բառերի մեծ բազմությամ՝ բամբաս /բամբասներ, ասեկու/, բամբասապիր /բամբասանք՝ զրպարտություն պարունակող զրուցյուն՝ նամակ՝ դիմում/, բամբասամոլ /նողի բամբասաեր/, բամբասասեր /բամբասել սիրող/, բամբասա /բամբասկոտ/, բամբասասիրություն /բամբասասեր լինել, բամբասասերի բնավորություն՝ վարքագիծ/ և այլն:<sup>11</sup>

<sup>4</sup> Սոցիարքման արդյունքներ, թրապանակ 2007թ., ԾՀՀԿ արխիվ:

<sup>5</sup> Հ. Ա ճ ա յ ա ն, Արմատական բառարան, հ.1, Եր., 1971, էջ 385:

<sup>6</sup> Նոր բազմիք հայկակեան լեզուի, հ.1, Եր., 1979, էջ 430:

<sup>7</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.1, Եր., 1969, էջ 277:

<sup>8</sup> Պ ո դ ո ս պատրիարք Ա դ ր ի ա ն ո ւ պ ո ւ ե ց ի, Խրատիք բանգարան, Ս. Էջմիածին, 2004, էջ 316:

<sup>9</sup> Ռ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Բամբասանքն իբրև բանահյուսության տեսակ, ԾՊՄԺ հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 51-52:

<sup>10</sup> Հ. Սլուշյանի հավաքածու:

<sup>11</sup> Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Եր., 1976, էջ 165:

Ունենալով կիրարկման և կենցաղավարման լայն ոլորտներ՝ բամբասանքներն ընդգրկում են ժողովրդի սոցիալական, կենցաղային, անձնական, հոգեբանական, քաղաքական և այլ բնագավառներ։ Արտահայտվելով քաղաքային բանահյուսությանը բնորոշ ժարգոնային բառերով, գուելկարանություններով, հասարակարանություններով ու ոուսարանություններով, դրանք ստեղծում են ազգագրական, սոցիալ-հոգեբանական տիպորոշ միջավայր՝ որոշակի նկարագրություններով, դիպվածներով ու ըմբռումներով։ Բամբասանքներում դրսորդում են ժողովրդի բարոյահոգեբանական առանձնահատկությունները, արժեքային համակարգը, կենցաղամշակութային յուրահատկությունները և այլն։

Սովորաբար բամբասանքի նյութ է դառնում այն երևոյթը, անձնական այն հատկանիշը, որը հասարակական կարևորություն է ներկայացնում։ Նայած բամբասանքին մասնակցողների սեռատարիքային պատկանելությունից՝ խոսակցության քեման կարող է ընդգրկել անհատական - հասարակական հարաբերությունների լայն շրջանակ և վերաբերել կենցաղային ցանկացած հարցի՝ նայած, թե զրուցակիցների համար ինչն է կարևոր։

Ավանդաբար բամբասանքը համարվել է կանանց բնորոշ զրադմունք և դա հաստատագրվել է քրիստոնեական հավատամքով այսպես։ «Քանի որ կանայք ի բնե շատախոս ու դատարկարան են, նրանց մոտ սովորական բան է բամբասանքը։...Եվ քանի որ կանայք գիտություններից ու զաղափարներից զորկ են և կարևոր ու օգտակար բաների մասին զգաւոն, սկսում են իրար բամբասել։ Ուստի ով էլ ինի՝ դրացի, խնամի, թե ընտանիքի անդամ, զերծ չի մնում նրանց լեզվից, որովհետև բոլոր ասեղնազրություններից ավելի լավ գիտեն ծաղկեցնել բամբասանքը՝ մեկը հազարվ բազմապատկելով, փոքր մեծացնելով, լուս փիդ դարձնելով»։ Կամ՝ «Կասկածամիտները, ինչպիսին են կանայք, դյուրամնտ են դեպի բամբասանքը և դժվարությամբ են ողջամիտ դառնում ու բամբասելուց դադարում, որովհետև ոչ որի չեն հավատում, այլ իրենց չար կարծիքի մեջ հաստատուն են մնում»։<sup>12</sup>

Գյումրու ժողովրդական իմաստությունն ասում է. «Բամբասելը և խռովելը կնկա վեշակ է»։<sup>13</sup> Այդ են վկայում նաև Հ. Սլյուշյանի հավաքած նյութերը, որոնք ներկայացնում են նոյն հասակային խճի կանանց բամբասանքն ու Գ. Քրուտյանի գծանկարը՝ միջին և բարձր տարիքի բամբասող կանանց կերպարներով։ Դա հաստատում է նաև Խասհակյանը. «Էնայտ դուրս կուգա, որ կնկա համար լսող պետք էր. էնքան, որ ինքը խոսի. Կնկա ականջն էղեր է օդի համար, թե չէ՝ խոսքի, կնկա խոսքն էլ որ կա, իրան մանած թելեն երկեն է»։<sup>14</sup>

Մեր կողմից անցկացրած սոցիարցումների արդյունքները ցույց տվեցին, որ այսօր այդ կարծրատիպը հիմնականում փոխվել է, քանի որ շատերի կարծիքով բամբասանքն ընդգրկում է սեռատարիքային տարրեր խմբերը (Երիտասարդներից մինչև ծերեր, այդ թվում նաև տղամարդիկ)՝։ Դա պատճառաբանվում է այն հանգամանքով, որ արդի հասարակության մեջ մեծ թիվ են կազմում աշխատանք, որում զրադմունք չունեցողները, ուստի հենց նրանք էլ ազատ ժամանակը լրացնում են բամբասելով։ Հատկանշական է, որ հաճախ շեշտվում է բամբասողների կրթական մակարդակը, համարելով, որ դա կիսագրագետ կամ թերուս նարդկանց է հաստու։ Այդ է պատճառը, որ հարցողների մի մասը գտնում է, թե բամբասանքն ավելի տարածված է գյուղերում, որտեղ, բացի այդ, մարդիկ իրար ավելի լավ են ճանաչում, քան քաղաքու։<sup>15</sup> Այս կարծիքը, անշուշտ, չի համապատասխանում իրականությանը, քանի որ, ինչպես հայտնի է, ավանդաբար քաղաքի բնակչությունն ավելի շատ ազատ ժամանակ ուներ, քան զյուղացին։

Այն, որ բամբասելու համար պարտադիր չէ զրադմունքի կամ աշխատանքի բացակայությունը, վկայում են հարցման այն պատասխանները, որոնք որպես բամբա-

<sup>12</sup> Պ ո դ ո ս պատրիարք Ա դ ր ի ա ն ո ւ պ լ ս ե ց ի, նշվ. աշխ., էջ 312, 318:

<sup>13</sup> Ն. Ն ի կ ո դ ո ս յ ա ն, Լեմինական, ՀՀ ԳԱԱ ՀԱՐ բանահյուսության արխիվ, FF II, էջ 7468:

<sup>14</sup> Ավ. Ի ս ա հ ա լ լ յ ա ն, նշվ աշխ., էջ 275:

<sup>15</sup> Տղամարդկանց բամբասանքի խիստ հետաքրքիր օրինակ է Ուստա Կարոյի և բամբասանքի սափրիչ (որի մասին համագյուղացիներն ասում էին. «Չիուդի բողչա է Գալոյի թերանք») գրուցը։

<sup>16</sup> Սոցիարցման արդյունքներ։

սանքի վայր նշում են նաև աշխատատեղը: Մենք դա տեսնում ենք նաև Գ. Քրուտյանի գծանկարում, որտեղ, ի թիվս մասնակից պարապ կանանց, բամբասանքին մասնակցում է իջլկով թել մանող կին: Սա ցույց է տալիս, որ բամբասանքը ավելի շուտ որոշակի մարդկանց բնորոշ գրադանունը է, նրանց ապրելակերպի ձև, որը որոշակի նպատակներ է հետապնդում՝ չարախուտել, գրաբրտել, անպատվել, վատարանել և այլն: Այս առունով տեղին է վկայակոչել «Խրատի բանգարան»-ը. «Քանզի մոլիճ բամբասում է, որ պեսզի ինքը բարի երևա, պարզամիտը բամբասում է, որովհետև խելացի չէ, ստախոսը բամբասում է, որովհետև դա է իր սեփական պաշտոնը, դատարկակյացը բամբասում է, որպեսզի ժամանական լինի, քշնամին բամբասում է, որպեսզի վրեժ առնի, շահախնդիրը բամբասում է, որպեսզի ինչ-որ բան շահի»:<sup>17</sup>

Բոլոր ժամանակներում բամբասանքը քննադատվել է, համարվել է անվայելու, մերժելի երևոյթ, սակայն դա չի խանգարել, որ այն գոյատևի և ընդգրկի կիրարկման լայն որորտները: Գյումրեցի կնոջ բարոյական բարձր վարկանշի համար, այլ հատկությունների բվում կարևորում էր նաև խոսքի մշակույթը: Գյումրու ժողովուրդը պահանջում էր. «Կմիկը պտի խոսքի ետևն ու առաջը ինացող էլեմին, բերանն էկած խոսքը չըսե, լավըն չափե, ձևե, նոր խոսի, փորեն դուս էկող խոսքը թիվ քյառերուն քցե, մնացածը ծանոյ ու թեքն էնե, նոր դուս հանե: Կմիկը լողույնի, խարարքզան, խարարտանոյ ու բերող, ուրիշներուն իրար քցող (գժտեցնող) պտի չեղնի:»<sup>18</sup>

Ըստ մեր հավաքած նյութերի, Գյումրի քաղաքի և Շիրակի մարզի բնակչության մեջ բամբասաներ կամ բամբասանքի մարդուն տարեր անուններ և պիտակներ են կազմել: Դրանց մի մասը բարբառային ձևեր են, ինչպես օրինակ՝ լողույնի, չիչո, խարարքզան, խառնակչի, խոսք տանող-բերող, յոթ ծովի մերան (կամ յոթ մածնի մերան), ճալան-ճորան և այլն: Սյուս խոմքը ներկայացնում է ավելի ուշ (խորիդային տարիներին) գործածության մեջ մտած և համեմատության-զուգահեռի վրա հիմնված նոր մականուններ՝ «Չաստի ուսդիո», «Քիրիսի», «Բանվոր բերք», «Փայլակ», «Լրաբեր», «Թաղի տեղեկատու» և այլն:<sup>19</sup>

Մեր ձեռքի տակ եղած բամբասանքի նյութերը, իրենց չափազանցությամբ հանդերձ, հետաքրքիր տվյալներ են տալիս Գյումրու առտնին կենցաղի, հատկապես կանանց գրադանունների, նրանց հետաքրքրությունների ու հատկանիշների մասին: Բամբասանքների ժամանակ արծարծված թեմաների միջոցով կարելի է պատկերացում կազմել այն մասին, թե ինչպիսի՞ն պետք է լինեն խելական կինն ու տղամարդը, երիտասարդն ու ծերը, նրանց արտաքինում, կամ վարքում ի՞նչն է ընդունելի կամ մերժելի, բարոյական ո՞ր հատկանիշներն են համարկում դրական կամ բացասական և այլն: Ամենաշատ քննարկվող թեմաներն են կանանց գործ անելը, արտաքինը, վարքը, պահվածը, ընտանեկան հարաբերությունները, ամուսնությունը ու աղջկատեսը:

Գյումրեցի կնոջ համար մաքրասիրությունը ամենակարևոր հատկանիշներից մեկն է. «... բոլ բերանը էրկուս պակաս խորարա էնե... յիստըկութենը խոմ փարով փլով չէ, բան ու գործի անունն ինչ է»:<sup>20</sup> Այդ է պատճառը, որ շատ հաճախ քննարկվում էին այն գործերը, որոնք տնից դուրս էին կատարվում՝ ի ցույց ամենքին: Այդպիսի գործերից էին լվացք անելն ու բուրդ լվալը:

Ազգագրական նյութերը վկայում են, որ քաղաքում XIX դ. վերջին-XXդ. սկզբին մեծ լվացքը տանում էին «Արփաչայր, Չարզի ճորը կամ Գյումրի չայր»: Արփաչայր լվացքի գնալը մեծ արարողություն էր, տոմ' որին մասնակցում էին տվյալ ընտանիքի հետ միասին նաև մոտ հարազատները: Փոքր լվացքը արվում էր տանը, ընդ որում գյումրեցի կինը լվացքը յոթ ջուր էր լվանում, ամեն կերպ փորձելով օճառ թիշ օգտագործել, սակայն լվալ մարտոր:՝<sup>21</sup> Սյուս կարևոր գործը բուրդ լվալն էր: Ընդունված կանոն էր տարին մեկ լվալ ներքնակների բրդերը, իսկ երեք տարին մեկ՝ վերմակներինը, այնպես որ ամուսնը կանայք ցույց էին տալիս և իրենց հմտությունը և կարողությունը:

<sup>17</sup> Պ ո դ ո ս պատրիարք Ա դ ր ի ա ն ո պ լ ս ե ց ի, Աշվ. աշխ., էջ 310:

<sup>18</sup> Հ. Գ. ո լ ե ց յ ա ն, Գյումրի (Ալեքսանդրապոլ, Լենինական), ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ազգագրության բաժնի արխիվ, տեսոր 1, 1976, էջ 60:

<sup>19</sup> Սոցհարցումների նյութեր:

<sup>20</sup> Հ. Գ. ո լ ե ց յ ա ն, տեսոր 1, էջ 117:

<sup>21</sup> Նույն տեսում, էջ 90-94, 118, 128-129:

Բնական է, որ լվացքի մաքրությունը և փոելու ձևը, բուրդը լվաճ ու ձաղկելը, անկողինը կարելը դրկից-հարևանների, սկեսուրմների ու տեզերկիմների քննարկման և բամբասանքի թեմա էր դառնում: Քերենք օրինակ. «Բուտուրս լվացի, փոեմ քիչըն չորնա, չըրդեմ: Ես ըսի՝ լրմզած է, իրմը չէ. ենքան լավ լրվացվավ, արրեշում դարձավ: Տեսներ երեգ էն Օսան էլ էր բուռս լրվացե. զուլումը բի. քեզի կոնիզ ըսողին ինչ ըսեմ. ճրմունտե, որել էր էն կողմ. կրսեմ՝ ըխչի՞, լավ չես լրվացե, կրսե ընձի ձեռ կուղա: Այ վայս խելա գրլիսուտ. ես հընչի՞ բըդի քեզ պէս լըդու հեղ թուլ տամ խոսա՞ն, օր դու էլ քեզի երեկազայիս: Գիդե՝ չիղենք վօվ է...»:<sup>22</sup>

Գյումրեցի կինը հասուկ էր պատրաստվում ձմռանը կամ «ձմեռվա թադարութին», որի մասն էր կազմում մուրաքանների և այլ պահածոնների պատրաստումը: Բամբասանքի մյուս թեման այս եփութափն էր, որը նոյնական կարևորվում էր կնոջը բնութագրելիս: Ինչպես երևում է նյութերից, պարծենալու առիթ էր բազմատեսակ ու մեծաքանակ մուրաքանների ու այլ կերակուրմների պատրաստումը, զնված ապրանքի որակն ու քանակը. «...վաափշե, ընձի իրմար զինը նշանակուտուն չունի. լավն եղնի, փարին չեմ աշե. եղ էր պագաս. խո վերեվի խուժընները չեմ, կերտան բազրից ապուռ-ժուրու կառնին գուկան...հողը աշխորի գիշուն. ըսենք չուես են, ի՞նչ են տեսն օր. խո մեզի պէս չե՞ն ճոռտն ու պոռտն:...Համեն օր իինքը կրտեսներ, թե բազրեն ինչ տեսագ ֆիշնա, զիլազ, ծորին, տիյա հերեց էլ մոշ ու էն հանտեր, ի՞նչ կրսեն. հա մալինա. թանգ ու էժնին չեմ աշե. ինչ կրսեն կուդամ ու կառնիմ: Հընչի՞ չառնիմ. դուրբանն են եղէ. մուրաքես, կամպուտ, սոզերս համարյա թամամ է, կրմնա պատլիճան, ծիծակ խորված էնեմ...»:<sup>23</sup> Մեկ այլ բամբասանքում քննարկվում է մուրաքա եփելու հմտությունը. «Մեր աշխադողներից մեզն էր ֆիշնի մուրաքա էպէ: Ըսի՝ երտամ շնորքը տեսնին. մուրաքա զուլումդ բի. գուն չկար հերեսը. մուրաքինը գունն է. մուրաքեն օր գունով չողնի...շցնես վազը կարմիր...հողը քեզի պէս կնիզ ըստի գրիշուն. պետկը ենքան քի է լցըր, օր ֆիշնեն գունը բոցրել է. մէ կովեն, տասը ծովեն. ջոր. ի՞նչ մուրաքա:»<sup>24</sup> Քերված օրինակները ցոյց են տալիս նաև զյումրեցիներին հասուկ մեծախոսությունը կամ, ինչպես ժողովուրդն է ասում «մեծերնությունը», չափազանցնելու, գլուխ գովելու, որիշին շավանելու, անուն դնելու հատկությունը:

Հարկ է նշել, որ մեր ձեռքի տակ եղած բամբասանքների նմուշներում արտահայտված են նաև զյումրեցի տղամարդու որոշ ընդունելի հատկանիշներ, ինչպես օրինակ՝ «տղեն կնճագ զյամը բոի ձեռ պայե», «տղամարդը բոի խոմե», «էն թարքեն օր գուզար, կրսեն էրնեց տիրոջդ. մայի կրնգտիզ ախ կենեն, մէ անգամ հետը խոսայն, զիդես էրոնց պէս դզի՞զ էր»:<sup>25</sup>

Բամբասանքների մյուս կարևոր թեման երիտասարդ աղջկների արտաքինը, պահիվածքն ու նրանց անուանությունն է: Բանահյուսական և ազգագրական նյութերից երևում է, թե օրինակ 1970-ական թվականներին որքան դժվարությամբ է կենցաղ մուտք գործել նորածլությունը և ինչ հետևանքներ է ունեցել: Հազարսի ազատականացումը իր հետ բերեց արտաքին տեսքի այնպիսի փոփոխություններ, որոնք նախկինում հանձնվում էին անվայերու, կնոջ, աղջկա համար անընդունելի: Ավանդական սովորություններին հակառակ՝ միայն տղամարդուն հասուկ համարվող տարատ (շալվար) կրելը, անպարկեցն (անբարոյական) կնոջը հասուկ շալվարը, շրբունքները, մագերը ներկեցն ու դիմահարդարումը ամենամեծ դժգոհությունն էր առաջացնում միջին և ավագ սերնդի ներկայացուցիչների մեջ, ինչն էլ դառնում էր բուռս քննարկման առարկա: Ինչ անուն ասես, որ չեն կացրել ավանդույթը խախտած աղջկան. «Ինչ պառողի մարդ որ գուզիս, կա. փաշեքն բաց աղջիկ է գուզիս, գողոլուզներով աղջիկ, ներկուգ քիսիար է գուզիս, բրեց մազեր, ինչ ֆատմի ռամզ է գուզիս՝ լիքն է», «Չընկ տեսի՝ աղջիկն շալվար հազմի. շալվարներու փաշեստանով ճանճ է քշին: Շալվարը քի էր, իրմզա լե թաժա սոլեր ին մողա քցի, անուն լե բլաֆորմ է, ինչ սաղանա է..»:<sup>26</sup>

<sup>22</sup> Հ. Մկրտչյան, թղթապահակ 1978, էջ 71:

<sup>23</sup> Նոյեն տեղում, էջ 66:

<sup>24</sup> Նոյեն տեղում, էջ 67:

<sup>25</sup> Նոյեն տեղում, էջ 65, 129, 68:

<sup>26</sup> Նոյեն տեղում, էջ 128, 130:

Անշուշտ, նման բամբասանքները բացասական հետևանքներ էին ոճենում, եթե տվյալ աղջկան ուզմվան էին գալիս: Գյումրու սովորության համաձայն, տղայի համար աղջիկ ուզելիս՝ ծնողները հարսնացուի վարքի, շնորքի մասին տեղեկություններ էին հավաքում հարևաններից: Հասկանալի է, որ երբեմն չարախոսությունն իր արդյունքը տալիս էր և ամուսնությունը չէր կայանում. «Մըր ախչի՞կըն է, օր սունն է մնացի. հուզընգաններ զիզան, գավզին, եղ է գուզին նրշան դընին, մեկ լէ տեսար, մեր շընիեր դրքլցներ բան մի հընարեցին, բանքախն, անուն է կրդնին ախչըկաս, ուս է զարգին, մարդիկ լե բորգին, կերքան»:<sup>27</sup> Այսպիսի դեպքի մասին պատմում է նաև Սլյոտիչ Արմենը «Հեղնար աղբյուր» վիպակում. «Սոսկալի վիրավորված, Սկրտչի մայրը վերադապավ տուն՝ արդեն ճանապարհին նտածելով, թե ինչ կերպ վրեժ լուծի ամբարտավաններից: Չանցավ նոյնիսկ մի օր, և ամբողջ Զորի Բողազով տարածվեց նորությունը.-Սկրտչի մայրը գնացել է Հեղնարին ուզելու իր տղայի համար, բայց նկատել է, որ աղջիկը հիվանդ է... Հեղնարի անունը միանգամից կուրքվեց: Հարսնախոսների ամընդհատ հոսքը նրանց տուն կտրուկ ընդհատվեց»:<sup>28</sup>

Հետաքրքիր է, որ այսպիսի բամբասանքը եկեղեցին համարում է ամենամեծ մեղքը. «Եվ հաճախ են պատահում նրանց մեջ այս վերջինները, ովքեր չարախոսում են աղջկանից կամ տղայից, որպեսզի նրանք ուրիշների հետ նշանվեն և իրենք էլ սրանցից կաշառը ստանան կամ մի ուրիշ բան՝ ընծայի անվան տակ: Այսպիսինները դասակից են մեր Տիրոց մատնիչ Հուդային...»:<sup>29</sup>

Այսպիսով բամբասանքը, անհիշելի ժամանակներից եղել և շարունակում է մնալ ժողովրդի բանավոր ավանդության անքակտելի մասը: Անկախ նրանից, թե ինչ վերաբերմունք ուներ և ունի հասարակությունը դրա նկատմամբ, որպես խոսք-զրույցի, ժամանցի ձև, այն լրացրել և ամբողջացրել է քաղաքի կենցաղամշակութային համալիրը: Լինելով անձը նշավակող գրուցատեսակ՝ իր քննադատությամբ ու չափազանցությամբ համերձ, այն արժեքավոր տվյալներ է պարունակում քաղաքի ազգագրության բազմաթիվ ուրուտների մասին: Ինչպես նշում է բանասացներից մեկը. «Բամբասանքը հանդիսանում է կարևոր միջոց որոշ տեղեկություններ իմանալու համար»:<sup>30</sup>

Բամբասելու սովորությը թեև զալիս է դեռևս նախնական հնդեվրոպական շրջանից, սակայն արդիական է նաև մեր օրերում: Ուստի նպատակահարմար ենք գտնում մեր խոսքն ավարտել Աստվածաշնչյան առակներով. «Արդար շորքերը լրեցնում են քշնամանքը, իսկ բամբասանք տարածողներն անզգամ են» (Առակ. Ժ 18), «Եղբայրներ, միմյանց մի՛ բամբասեր, ով բամբասում կամ դասում է իր եղբորը, չարախոսում է օրենքի մասին և դասում է օրենքը» (Հակոբ, Դ 11):<sup>31</sup>

## СПЛЕТНИ И ПЕРЕСУДЫ В БЫТИУ ГЮМРИ

— Резюме —

— К. Базеян —

Имея широкую среду бытования, сплетни охватывают социальную, психологическую, культурную, политическую и другие сферы жизни людей. В сплетнях выявляются нравственно-психологические, культурно-бытовые особенности и ценностные ориентации народа. В статье рассматриваются собранные в 1970-ых годах, в качестве фольклорных материалов, сплетни Ленинакана, которые сопоставляются с материалами современных соцопросов. Анализ материалов показал, что сплетни и пересуды могут быть важным источником для изучения повседневного быта города Гюмри. Они дают интересные сведения в особенности об интересах, занятиях, характерных чертах и ценностных отношениях женщин.

<sup>27</sup> Հ. Մայակավ, բորբանակ 1976թ.:

<sup>28</sup> Մ. Արմեն, Հեղնար աղբյուր, Եր., 1961, էջ 11:

<sup>29</sup> Պողոս պատրիարք Ադրիան առ պլուեցի, եղավ. աշխ., էջ 314:

<sup>30</sup> Սոցհարցման նյութեր, էջ 8:

<sup>31</sup> Նոյն տեղում, էջ 321-322: